ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/55

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2018թ. թիվ 03/26-3/8525-18 գրությամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1581 գրության հիման վրա, 11.05.2018թ. թիվ 03/26-3/8525-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 4.1 կետի (Հավելված 1)՝ 69-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2018թ. ժամը 11:20 տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ և առկա է ներկայացված փաստաթղթերը լրացուցիչ ուսումնասիրելու անհրաժեշտություն՝ հանձնաժողովը որոշել է նիստը շարունակել 17.04.2018թ. ժամը 11:00-ին:

17.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի՝

- «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի թիվ 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 69-րդ չափաբաժնի մասով չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել ընթացակարգի հրավերի 69-րդ չափաբաժնով նախատեսված «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*3000)» ապրանքատեսակի մասով, որի փոխարեն, սակայն, 6.1

հավելվածով ներկայացված է «Կավիճ, աղացած (Կավիճ)» ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել վերը Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել մասնակիցների կողմից պահանջվող փաստաթղթերը՝ ներկայացնելուց հետո՝ օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2018թ.ժամը 15:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից որպես շտկված տարբերակ ներկայացված ընթացակարգի հրավերի թիվ 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 69-րդ չափաբաժնի մասով դարձյալ չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել ընթացակարգի հրավերի 69-րդ չափաբաժնով նախատեսված «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*3000)» ապրանքատեսակի մասով, որի փոխարեն սակայն 6.1 հավելվածով ներկայացված է «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*1000)» ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 20-րդ չափաբաժնի մասով մերժել «Լուսալ» ՍՊԸ-ին, իսկ 69-րդ չափաբաժնի մասով՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, 17.04.2018թ. գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի թիվ 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, 69-րդ չափաբաժնի մասով, չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել ընթացակարգի հրավերի 69-րդ չափաբաժնով նախատեսված «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Փ-110*3.2*3000)» ապրանքատեսակի մասով, որի փոխարեն, սակայն, 6.1 հավելվածով ներկայացված է «Կավիճ, աղացած (Կավիճ)» ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը (17.04.2018թ.) էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին՝

առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 17.04.2018թ ժամը 17:48-ին Ընկերության «armeps» էլեկտրոնային համակարգում գրանցված ciacanmarket@gmail.com էլեկտրոնային հասցեից Ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «r.mardoyan@mil.am» էլեկտրոնային հասցեին է ուղարկել հավելված 6.1, սակայն ուղարկելուց հետո պարզել է, որ ներկայացրել է մեկ այլ չափաբաժնի շրջանակներում պահանջվող հավելված 6.1, այն է՝ «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*3000)» ապրանքատեսակի փոխարեն ներկայացրել է «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*1000)» ապրանքատեսակի բնութագիրը:

Նույն օրը, պարզելով թույլ տված տեխնիկական վրիպակը, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է մեկ աշխատանքային օրվա ընթացքում, մասնավորապես 17.04.2018թ ժամը 20:16-ին Ընկերության «armeps» էլեկտրոնային համակարգում գրանցված ciacanmarket@gmail.com էլեկտրոնային հասցեից Ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «r.mardoyan@mil.am» էլեկտրոնային հասցեին է ուղարկել հավելված 6.1՝ արդեն 69-րդ չափաբաժնի համար նախատեսված տեխնիկական բնութագրով՝ «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*3000)»:

Նշված էլեկտրոնային նամակում Ընկերությունը գրել է հետևյալը. «Խնդրում եմ հիմք ընդունել Հավելված 6. 6.1-ի այս ուղղված տարբերակը, նախկինում ուղարկվածի մեջ առկա է տեխնիկական վրիպակ, սխալմամբ այլ չափաբաժնի ապրանքի նկարագիր է նշվել: Խնդրում եմ հաստատել ստացումը»:

Ի պատասխան վերոհիշյալի՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի «r.mardoyan@mil.am» էլեկտրոնային հասցեից «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին 18.04.2018թ. ժամը 14:16-ին եկել է հավաստում առ այն, որ Ընկերության նամակը ստացվել է:

Այնուամենայնիվ, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2018թ. ժամը 15:00-ին նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն արձանագրվել է, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից որպես շտկված

տարբերակ ներկայացված ընթացակարգի հրավերի թիվ 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 69-րդ չափաբաժնի մասով դարձյալ չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել ընթացակարգի հրավերի 69-րդ չափաբաժնով նախատեսված «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*3000)» ապրանքատեսակի մասով, որի փոխարեն սակայն 6.1 հավելվածով ներկայացրել է «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*1000)» ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը:

Ընկերությունը նման պայմաններում ենթադրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից, ըստ երևույթի, հիմք է ընդունվել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից 17.04.2018թ ժամը 17:48-ին ուղարկված հավելված 6.1, մինչդեռ ինչպես արդեն նշվել է, նույն օրը պարզելով թույլ տված տեխնիկական վրիպակը, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է մեկ աշխատանքային օրվա ընթացքում, 17.04.2018թ ժամը 20:16-ին գնահատող հանձնաժողովի քարտուղարի «r.mardoyan@mil.am» էլեկտրոնային հասցեին է ուղարկել հավելված 6.1, արդեն 69-րդ չափաբաժնի համար նախատեսված տեխնիկական բնութագրով՝ «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*3000)»:

Միևնույն ժամանակ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն պատրաստակամություն է հայտնել ՍՑ-ԱՄ-2018/55 ընթացակարգով հրավիրվող նիստի ժամանակ բացել Ընկերության «ciacanmarket@gmail.com» էլեկտրոնային հասցեն և ապացուցել, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ուղարկել է հավելված 6.1 շտկված փաստաթղթերը:

Այսպիսով, Ընկերությունը գտնում է, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն պատշաճ կատարել է Կարգի 47-րդ կետով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված ժամկետում՝ մեկ աշխատանքային օրում, շտկել է արձանագրված անհամապատասխանությունը: Ուստի տվյալ դեպքում, Ընկերության կարծիքով, առկա չէ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից Կարգի 47-րդ կետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում (մեկ աշխատանքային օրում) չի շտկում արձանագրված անհամապատասխանությունը, իսկ

ինչպես վկայում են ներկայացված ապացույցները, տվյալ դեպքում առկա է «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված շտկումը սահմանված ժամկետում կատարելու և պատվիրատուի համապատասխան էլ. հասցեին ուղարկելու փաստը:

Ընկերությունը գտնում է, որ նման փաստական հանգամանքներում «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանզի Ընկերությունը, ինչպես արդեն նշվել է, կատարել է հավելված 6.1 արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու և պատվիրատուին ներկայացնելու պարտավորությունը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում և Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/55 ընթացակարգի շրջանակներում 16.05.2018թ. ժամը 11:25-ին և 22.05.2018թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1581 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութերի գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 69-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն, որը սահմանված կարգով ներկայացրել է Ընթացակարգի

հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում (Հավելված N 6) և առաջին տեղ զբաղեցրած մանսակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր (Հավելված N 6.1)): Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Ընթացակարգի հրավերի N 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 69-րդ չափաբաժնի մասով չէր համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող էր ճանաչվել ընթացակարգի 69-րդ չափաբաժնով նախատեսված «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*3000)» ապրանքատեսակի մասով, որի փոխարեն սակայն N 6.1 հավելվածով ներկայացված էր «Կավիճ, աղացած (Կավիճ)» ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը: 17.04.2018թ. հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և մասնակցին առաջարկել՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը: «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից որպես շտկված տարբերակ ներկայացված ընթացակարգի հրավերի N 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 69-րդ չափաբաժնի մասով դարձյալ չէր համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող էր ճանաչվել ընթացակարգի հրավերի 69-րդ չափաբաժնով նախատեսված «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*3000)» ապրանքատեսակի մասով, որի փոխարեն սակայն N 6.1 հավելվածի շտկված տարբերակում ներկայացված էր «Կոյուղու խողովակներ (կոյուղու խողովակներ Φ-110*3.2*1000)» ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը:

Պատվիրատուն 22.05.2018թ. էլեկտրոնային եղանակով գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ 17.04.2018թ. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ոչ թե երկու, այլ մեկ նամակ և հանձնաժողովի քարտուղարը հավաստել է հենց այդ նամակի ստացումը՝ «Reply» տարբերակով և դա հնարավոր է ստուգել Ընկերության էլեկտրոնային փոստից: Երկրորդ անգամ ուղարկված

շտկված տարբերակի վերաբերյալ Պատվիրատուն նշել է, որ այն հանձնաժողովի էլեկտրոնային փոստին ստացվել է 21.05.2018թ. և բնականաբար հանձնաժողովը դա չէր կարող գնահատել 17.04.2018թ.: 21.05.2018թ. Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը չեն պարունակում էլեկտրոնային թվային ստորագրություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/55 ընթացակարգի շրջանակներում 16.05.2018թ. ժամը 11:25-ին և 22.05.2018թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/55 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/55 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության Հավելված N 1-ի համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 69-րդ չափաբաժնի մասով, որին 03.04.2018թ. սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (ընթացակարգի հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է մասնակցի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ (ՀՀ ռեզիդենտների դեպքում) հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերի հավելված N 6.1-ի):

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2018թ. ժամը 11:20-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից 69-րդ

չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և 17.04.2018թ. Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ որպես շտկված տարբերակ ներկայացված Ընթացակարգի հրավերի N 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 69-րդ չափաբաժնի մասով դարձյալ չի համապատասխանում հրավերի պահանջներին:

5. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության «ciacanmarket@gmail.com» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը՝ 17.04.2018թ. ժամը 17:48-ին Ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «r.mardoyan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է Հավելված 6-ի և 6.1-ի շտկված տարբերակը: Միևնույն ժամանակ նույն օրը ժամը 20:16-ին Ընկերությունը կրկին էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ուղարկել է Հավելված 6-ի և 6.1-ի շտկված նոր տարբերակ, խնդրելով հիմք ընդունել երկրորդ անգամ ներկայացված տարբերակը, քանի որ նախկինում ուղարկվածի մեջ առկա է տեխնիկական վրիպակ, սխալմամբ այլ չափաբաժնի ապրանքի նկարագիր է նշվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.05.2018թ. թիվ 03/26-3/8525-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1581 գրությունը և կից

փաստաթղթերը, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխա-

նության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված

ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության Հավելված N 1-ի համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ճանաչվել է

առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 69-րդ չափաբաժնի մասով, որին 03.04.2018թ. սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (ընթացակարգի հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է մասնակցի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ (ՀՀ ռեզիդենտների դեպքում) հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերի հավելված N 6.1-ի):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության Հավելված N 1-ի համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 69-րդ չափաբաժնի մասով, որին 03.04.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2018թ. ժամը 11:20-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից 69-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ Ընկերությունը առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ընթացակարգի 69-րդ չափաբաժնով նախատեսված «Կոյուղու խողովակներ (Կոյուղու խողովակ Փ-110*3.2*3000)» ապրանքատեսակի մասով, սակայն փոխարենը 6.1 հավելվածով ներկայացված է «Կավիճ, աղացած (Կավիճ)» ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 17.04.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին առաջարկելով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընկերությունը 17.04.2018թ. ժամը 17:48-ին Ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «r.mardoyan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է Հավելված 6-ի և 6.1-ի շտկված տարբերակը: Միևնույն ժամանակ արձանագրում եմ նաև, որ համաձայն «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ԱՄ-2018/55 ընթացակարգի քննության շրջանակներում ներկայացված Ընկերության էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքի՝ Ընկերությունը 17.04.2018թ. ժամը 20:16-ին կրկին էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ուղարկել է Հավելված 6-ի և 6.1-ի շտկված նոր տարբերակը, խնդրելով հիմք ընդունել սույն տարբերակը, քանի որ նախկինում ուղարկվածի մեջ առկա է տեխնիկական վրիպակ, սխալմամբ այլ չափաբաժնի ապրանքի նկարագիր է նշվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ որպես շտկված տարբերակ ներկայացված Ընթացակարգի հրավերի N 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 69-րդ չափաբաժնի մասով դարձյալ չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնավորապես՝ Ընկերությունն առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ընթացակարգի 69-րդ չափաբաժնով նախատեսված «Կոյուղու խողովակներ (Կոյուղու խողովակ Փ-110*3.2*3000)» ապրանքատեսակի մասով, որի փոխարեն սակայն 6.1 հավելվածով ներկայացված է «Կոյուղու խողովակներ (Կոյուղու խողովակ Փ-110*3.2*1000)» ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի համապատասխան ծանուցումը ստանալուց հետո նույն օրը՝ 17.04.2018թ. երկու անգամ ուղարկել է պահանջվող փաստաթղթերի շտկված տարբերակ, ընդ որում երկրորդ անգամ ուղարկելով՝ Ընկերությունն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին խնդրել է հիմք ընդունել հենց այդ տարբերակը, քանի որ առաջին տարբերակի մեջ տեղ է գտել տեխնիկական վրիպակ:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ ապրանքների գնման դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»

պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Այսիսով՝ Ընկերությունը, կատարելով Կարգի 47-րդ կետի պահանջները, կաշկանդված չի եղել մեկ աշխատանքային օրվա ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացնելու իր կողմից՝ որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ ներկայացված փաստաթղթերի ուղղված տարբերակը՝ միևնույն ժամանակ գրավոր խնդրելով գնահատող հանձնաժողովին հիմք ընդունել ուղղված տարբերակը:

Դրա հետ մեկտեղ արձանագրում եմ նաև, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին էլեկտրոնային եղանակով ներկայացվել են համապատասխան ապացույցներ, համաձայն որի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «r.mardoyan@mil.am» էլեկտրոնային հասցեին «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից երկրորդ անգամ 17.04.2018թ. 20:16-ին ուղարկված փաստաթղթերի ուղղված տարբերակը ստացվել է միայն 21.05.2018թ.: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից 20.04.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի հայտը մերժելիս որպես հիմք ընդունվել էր Ընկերության կողմից 17.04.2018թ. ժամը 17:48-ին ուղարկված շտկված փաստաթղթերի սկզբնական տարբերակը, իսկ փաստաթղթերի ուղղված երկրորդ տարբերակը ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի գնահատվել, քանի որ այն սահմանված ժամկետում չէր ստացվել վերջինիս կողմից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ Ընկերության կողմից 17.04.2018թ. ուղարկված երկրորդ էլեկտրոնային նամակը գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ստացվել է սահմանված ժամկետներից ուշ և գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատել նշված փաստաթղթերը, այնուամենայնիվ, գտնում եմ, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն կատարել է Կարգի 47-րդ կետով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված ժամկետում, մեկ աշխատանքային օրվա ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղարկել է շտկումները՝ ուղղված էլեկտրոնային նամակի տեսքով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չեն խախտվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2018թ. թիվ 03/26-3/8525-18 գրությամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00103837) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**